

ԲԱՂԱԶԱՅՆԱՀԱՆԳ ՊԱՐԶ ԲԱՒԵՐԻ ՀՈԳՆԱԿԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱԽՄԱՍՏԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ 'ԻՄՍԵՎՈՒՈՒՄՆԵՐ'

Բ. Խ. ՄԵԹՈՒՆՑ

Ինչպես հայտնի է, հին հայերենում հոգնակի թիվը կազմվում է «մաքուր» -ք հոգնակերտով և մի շարք զուգորդական մասնիկներով, որոնց հիմնական և թվակիր բաղադրիչը դարձյալ -ք-ն է: Թեև երկու կարգի հոգնակերտները մասնակի դեպքերում կարող են փոխարինել միմյանց, սակայն հիմնականում դրանք ունեն իրենց հատուկ կիրառական ոլորտները, ընդ որում, -ք-ն ունի լայն ընդգրկում, իսկ զուգարական մասնիկների գործածությունը սահմանափակվում է բառերի առանձին շարքերով: Անշուշտ, նման հատկանիշով չի սահմանափակվում կառուցվածքով տարբեր հոգնակերտների առանձնացումը. դրանք հանդես են բերում նաև իմաստային և հոգնակիակազմ հիմքերի յուրահատուկ դրսևորումներ: Այսպես, օրինակ՝ եթե -ք հոգնակերտին համադրվող հիմքը սովորաբար եզակի անհնչյունափոխ ուղղականն է, մասամբ նաև սեռականը, ապա զուգորդումներին կցվող հիմքերում գկատե:ի են հնչյունափոխական այլայլ երևույթներ:

Ինչ վերաբերում է բաղաձայնահանգ պարզ բառերին, ապա դրանք աչքի են ընկնում եզակի-հոգնակի հիմքերի նույնությամբ, այսինքն՝ հնչյունակազմի որևէ փոփոխություն տեղի չի ունենում: Պատճառը, անշուշտ, -ք հոգնակերտն է, որը, լինելով լոկ բաղաձայնական տարր, շեշտ չի ընդունում, և եզակի հիմքը պահպանվում է նույն շեշտվածությամբ: Չնայած դրան՝ գրաբար-աշխարհաբար՝ գրական տարբերակների համեմատությամբ այդ բառերը ցուցաբերում են այնպիսի տարբերություններ, որոնց հիման վրա հնարավոր է դառնում առանձնացնել մի քանի ենթախմբեր: Ավելացնենք նաև, որ հողավածում բերվող բոլոր օրինակները հինգերորդ դարի մատենագրությունից չաղված հոգնակի ուղղականի ձևերն են և հոգնակիակազմ հիմքերը, որոնցով հնարավորին չափ սահմանափակվում է հսկայական նյութը և որոշակի դարձնում -ք հոգնակերտի կիրառական հնարավորությունները ստորև բերվող բառաշարքերում:

Այսպիսով, հաշվի առնելով ձևաիմաստային մի քանի հատկանիշներ՝ բաղաձայնահանգ պարզ բառերի համար ընդունում ենք հետևյալ խմբերը՝

ԱՌԱՋԻՆ: Անհամեմատ մեծ թիվ են կազմում հոգնակիակազմ այն հիմքերը, որոնք հավասարապես գործածական են գրական երկու տարբերակներում: Հինգերորդ դարի մատենագրությունից այդ բառերի հոգնակի ուղղականի համար առանձնացված են երկու հարյուրից ավելի բառեր, որոնք հիմնականում աչքի են ընկնում ձևաիմաստային միօրինակությամբ, այսինքն՝ գործածվում են քանակային արժեքով: Այդ պատճառով էլ անհրաժեշտ չենք համարում ներկայացնելու դրանց մանրամասն քննությունը և մեր կողմից առանձնացված ամբողջական օրինակները: Բացառում ենք միայն հայկազյան բառարանում չվկայված² բառերը՝ հաշվի առնելով դրանց անհրաժեշտությունը աղ նպատակների համար: Հոգնակիի այդ ձևերն են՝ ազահք (Խոր. 452), աղետք (Խոր. 144, նաև՝ Եղ. 224), այրք (Խոր. 296), բաժակք (Ազ. 300), գանձք (Ազ. 402, 82), գերգամանք (Բուզ. 222), գիճք (Ազ. 56, նաև՝ Փրպ. 436), դպիրք (Ազ. 68), երազք (Ազ. 372), զգաստք (Կոր. 140), զոհք (Եզն. 195), գրուքք (Խոր. 32, 70), թեթք (Եզն. 64, 133), խարխիսք (Ազ. 416), խաչք (Ազ. 416), խոցք (Բուզ. 370), խուք (Բուզ. 122), կաղք (Բուզ. 122), ծազք (Ազ. 66, 214), ծերք (Խոր. 30, նաև՝ Եղ. 370), կախարդք (Խոր. 274), կարգք (Խոր. 36, 226, նաև՝ Բուզ. 350, Ազ. 138, 476, 490, Փրպ. 60), կովք (Եզն. 85), կոշիկք (Բուզ. 336, 406), հարճք (Խոր. 228), հատաք (Ազ. 212, 490, նաև՝ Բուզ. 142, 342), հեզք (Եղ. 356),

¹ Նկատի ունենք արևելահայ գրական լեզուն:

² Այսուհետև հայկազյան բառարանում չվկայված բառերի համար նկատի ունենք միայն հինգերորդ դարի մատենագրությունը:

Ռիանդոք (Խոր. 178), հողմք (Ագ. 356, նաև՝ Խոր. 452), ձայնք (Փրպ. 244), մարմինք (Ագ. 72, 128, 292, 300, 314, 362, նաև՝ Բուգ. 276, Փրպ. 248, Եղ. 51), միսք (Ագ. 362), մշակք (Ագ. 248, 352, նաև՝ Բուգ. 148), նաւք (Խոր. 130, նաև՝ Փրպ. 154), շաքաթք (Ագ. 60), ոչխարք (Ագ. 354, 454), որքք (Փրպ. 212), որիչք (Ագ. 360), ջահք (Ագ. 114), սուլք (Խոր. 452), տունկք (Ագ. 362, նաև՝ Բուգ. 22), փուշք (Ագ. 364):

Ինչպես և սպասվում էր, այս բառերի հոգնակին ունի կիրառական նվազ հաճախականություն, այսպես, օրինակ՝ երեք և ավելի գործածությամբ հանդես են եկել ընդամենը հինգ բառեր, իսկ մյուս բառերի հոգնակները հանդիպում են մեկ-երկու անգամ միայն:

ԵՐԿՐՈՐԻ: Այս խմբում ընդգրկում ենք հոգնակիակազմ այն հիմքերը, որոնք գրաբար-աշխարհաբար տարբերակներում կիրառական կամ կառուցվածքային տարբեր արտահայտություններ ունեն: Այս հիմունքով դրանց համար կարելի է ընդունել հետևյալ ենթախմբերը՝ ա) բառեր, որոնք գործածական են հին հայերենում, իսկ աշխարհաբարի գրական տարբերակում պատմական հնաբանություններ կամ հնացած բառեր են, բ) բառեր, որոնք հին հայերենում ունեն անկախ, արմատական կիրառություն, իսկ աշխարհաբարի գրական տարբերակում հանդիպում են միայն քաղաղությունների մեջ, գ) այլ կարգի առանձնահատկությամբ բառեր:

Կիրառելիության գործընթացը ամբողջացնելու համար՝ պակաս հետաքրքիր չէ նաև այն, թե ինչպիսի վիճակ են ներկայացնում այդ բառերը հայերեն բարբառներում: Այստեղ արդեն համեմատության համար մեծ քանակով փաստեր են մատուցում Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» և հայերենի բարբառներին նվիրված մի շարք ուսումնասիրություններ:

Պատմական հնաբանություններ կամ հնացած բառերի շարքում դաստասված կեշտ «կրոն, աղանդ», դամբար «լապտեր, ջահ», սաղար «գորապետ, գորավար, հրամանատար», սատրապ «կառավարիչ, կուսակալ», վզուրկ «մեծ, ավագ», տեգ «նիզակի ծայրի սուր երկաթը, կարճ նիզակ», ուղխ «հոսող ջուր, հեղեղ», հոգնակիակազմ հիմքերը հատուկ են միայն գրաբարին, որոնց հոգնակիի համար ունենք հետևյալ օրինակները.

Կեշտ՝ այլ հաստատեալ կայցեն աներկիտութեամբ յիրաքանչիւր ուսմուս... և որ այլ բազում կեշտք են ի կողմանս կողմանս (Եղ. 122, նաև՝ Եղ. 290):

Ղամբար՝ ի գայցեն ի լեզուս նոցա ղամբարք, զի գմեղս ամենայն մարդկան հակեցեն այրեացեն, բարձցեն ի միջոյ (Ագ. 376):

Սաղար՝ թէ քանի գունդ զգօրսն բաժանիցեն, և որ ոք ի նոցանէ սաղարք լինիցին (Եղ. 194):

Սատրապ՝ Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ... ամենայն սատրապք խախարարք և ազատք (Բուգ. 108):

Վզուրկ՝ Եւ ամենայն վզուրկքն և պատուական նախարարքն... ամաչեցեալ կուրանային և ընդ երկիր պշնուին (Եղ. 168):

Տեգ՝ և քարինք, և նետք, և տեգք արձակեալ լինէին, և խոցոտեալ մերքն յապուշ դառնային (Խոր. 350):

Ուղխ՝ Վասն սորա և ոչ ուղխք զգետն ստուարացուցին (Խոր. 142):

Ծարքի մյուս բառերն աչքի են ընկնում կիրառական ինչ-ինչ առանձնահատկություններով, որոնց վերաբերյալ հնարավոր է կատարել հետևյալ դիտողությունները, այսպես՝ **հոնջի** հոգնակիակազմ հիմքը հին հայերենում «մեծ իշխան, կուսակալ» իմաստն ուներ, իսկ «չոջիկ, փողոցային աղջիկ» իմաստով հանդիպում է միայն Խոտորջուրի բարբառում: Բառի հոգնակիի համար ունենք՝ Եւ ի զինուորական կողմանէն՝ զորեսին գահեղեցն իւրոյ տաճարին, որ թղեշխքն կոչին (Ագ. 484):

Ճետ հոգնակիակազմ հիմքը «սերունդ, զավակ, ծնունդ» իմաստներով հանդիպում է հին հայերենում, ինչպես՝ թող թէ որ մարմնապէս իսկ էին նոցա ճետք (64): Արևմտահայ մի շարք բարբառներում (Վան, Ալաշկերտ, Մուշ ևն) գործածվում է «ճուտ, աչդոր» իմաստներով:

Սղոխ հոգնակիակազմ հիմքը հին հայերենում «մեղմ քամի, սյուր» իմաստն ուներ: Արևմտահայ մի շարք բարբառներում (Մուշ, Բաղեշ, Մուկք, Վան) գործածվում է «քարակ սառոյց, խոնավ հող» իմաստներով: Հինգերորդ դարի մատենագրության մեջ քառի հոգնակիի³ համար ունենք՝ և որ ի ծովէքն մօտի եղոյ որ ելանեն ստեպ-ստեպ սղոխք օղոյ (Խոր. 428):

Հաս հոգնակիակազմ հիմքը համանուն է, որը «թռչուն, հավք» իմաստով գործածվում է հայերենի բոլոր տարբերակներում էլ (թե՛ եզակի և թե՛ հոգնակի), իսկ «պապ» իմաս-

³ Հոգնակիի այս և այսուհետև բերվող բոլոր օրինակները առանձնազգած են հինգերորդ դարի մատենագրությունից:

տով կիրառությունը հատուկ է հին հայերենին, որի հոգնակիի համար ունենք՝ և հարքն մեր, և հաւք հարցն մերոց կային նմա ի ծառայութեան վաստակս (Շղ. 90):

Կառուցվածքային-կիրառական առանձնահատկությամբ սակավաթիվ բառեր հին հայերենում անկախ, արմատական ձևով գործածվում են եզակի թվում և դառնում հոգնակիական հիմքեր, մինչդեռ աշխարհաբարի գրական տարբերակում դրանք հանդիպում են միայն բառային բաղադրություններում, ինչպես՝

Ամ «տարի»: Աշխարհաբարի գրական տարբերակում կազմում է զանազան բաղադրություններ (Ամաճոր, հնգամյա, զատամյալ ևն), իսկ բարբառներում անգործածական է: Հին հայերենում այս բառը անկախ, արմատական ձևով ուներ կիրառական մեծ հաճախականություն, որի հոգնակիի համար առանձնացված են՝ զի բազում ամք են, զի ընկեցին զնա անդր (Ագ. 124, նակ՝ Ագ. 60, 106, Խոր. 14, 296, Բուգ. 250, 308, Կոր. 146):

Պետ «դիտող, պահակ, լրտես»: Աշխարհաբարի գրական տարբերակում հիմք է դառնում բայականության, ածանցման և բարդություններ կազմելու համար (դիտել, դիտող, դիտարան, ակնդետ, հետադիտակ ևն): Բարբառների համար եղած վկայությունն է. «Նոր բառ է դիտեան Ղզ. (Ղազախ) «ռազմական դիտանոց»⁴:

Պետ բառի հոգնակիի համար ունենք մեկ օրինակ միայն՝ Եկին դիտեցին դէտքն զքանակն Մանուելի (Բուգ. 382):

Երդ «կտորի վրա անք, ընտանիք»: Աշխարհաբարի գրական տարբերակում սովորաբար հանդիպում է -իկ վերջածանցով: Տարածված է հայերենի շատ բարբառներում՝ վերջածանցով և նախահավելական հ, յ բաղաձայններով (յերդիկ, յերտիկ, հերթ, էրթիք ևն):

Բառի հոգնակիի համար առանձնացված է մեկ օրինակ, որը օգտագործված է «ընտանիք» իմաստով՝ քան զքսան հազարի սատակեցան երդք մարդկան, ոչ մնացին ի նոցանէ և ոչ մի (Բուգ. 178):

Ծարծ: Հոգնակիական այս հիմքը արմատական ձևով հանդիպում է հին հայերենում և հայերենի մի շարք բարբառներում «շարժում, երեքալը, երկրաշարժ» իմաստներով: Աշխարհաբարի գրական տարբերակում այն հիմք է դառնում բայականության, ածանցման և բարդություններ կազմելու համար (շարժել, շարժիչ, անշարժ, երկրաշարժ ևն):

Հայկազյան բառարանում չկա որևէ վկայություն, իսկ մեր կողմից առանձնացված օրինակում ունի «շարժում» իմաստը՝ և կամ թէ շարժք երակացն յարմա՛ր իցեն (Շղ. 348):

Վեմ «կարծր քար, ապառած»: Արմատական ձևով հանդիպում է հին հայերենում և Մշո բարբառում, իսկ աշխարհաբարի գրական տարբերակում այն հիմք է դառնում բառարարությունների համար (վիմագիր, վիմագրություն, վիմատիպ ևն):

Հայկազյան բառարանում չվկայված օրինակն է՝ որոց դադարք՝ անապատք և ամալիք, և ծածկոյթք՝ վեմք և մացառք (Խոր. 386):

Ենթախմբում ընդգրկված փոքրաթիվ բառեր չեն քննորոշվում ընդհանուր հատկանիշով, այլ դրանք գրաբար-աշխարհաբար տարբերակներում հակադրվում են ոչ միատեսակ հնչյունականով կամ կիրառելիությամբ և ոչ կիրառելիությամբ, այսպես, օրինակ՝

Ազատ «ազնվական», ամուր «բերդ, ամրոց» հոգնակիական հիմքերը ածականական իմաստով գործածական են հայերենի բոլոր տարբերակներում էլ, իսկ գոյականի իմաստով հանդիպում է միայն հին հայերենում, ընդ որում, ազատ բառի հոգնակիի համար առանձնացված են մեծ քանակով օրինակներ, իսկ ամուր բառի հոգնակին հանդիպել է մեկ անգամ, ինչպես՝

Ազատ՝ ազատք և քահանայք գաւառին... դիմեալք յօր կարգադրութիւն նորա կատարեն (Փրպ. 84, նակ՝ Փրպ. 146, 418, Բուգ. 86, 346, Ագ. 82):

Ամուր՝ և տապալեցան ատերեցան ամուրք ապաստանի մոցա (Շղ. 404):

Անդ «դաշտ, արտ»: Աշխարհաբարի գրական տարբերակում և բարբառներում սովորաբար գործածվում է հ. նախահավելականով (հանդ): Հր. Աճառյանի վկայությամբ անփոփոխ հնչյունականով պահպանվում է նաև Ջուղայի բարբառում՝ միայն անդէն դաշտէն դարձվածքում⁵:

Անդ բառի հոգնակիի համար ունենք՝ զի մի ոք քնակիցէ ի նոսա մարդ. այլ ճարակ հօտից լիցի և դադարք գազանաց... և անդք սահմանակցաց (Բուգ. 176):

Մի բառը մեկ անգամ միայն հանդիպում է Շղիշեի մոտ: Նույն օրինակը վկայված է արմատական և հայկազյան բառարաններում՝ «աթար, թրիք, վառելու ցան, ծիրտ» իմաստային բացատրություններով: Ավելի հավանականը «վառելու ցան» իմաստն է, որը

⁴ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 862:

⁵ Նույն տեղում, էջ 186:

հարմար է թվում «ծիւք և քակորք» կապակցության համար: Այստեղ ներկայացնում ենք այդ միակ փաստը՝ ծիւք և քակորք ի կրակ մի եկեացեն (Եղ. 104—105):

Համբար «շտեմարան, պահեստ, պահարան» հոգնակիակազմ հիմքը հին հայերենում հանդիպում է նաև առանց ու նախահավելականի, սակայն Հր. Աճառյանի կատարած վիճակագրության համաձայն. «Հին լեզվի մեջ ավելի գործածական է համբար (այսպես Ս. Գրքում 20 անգամ գործածված է համբար, մեկ անգամ՝ ամբար)»⁶:

Հայկազյան բառարանում չհիշատակված հոգնակիի օրինակն է՝ Զի բազում՝ համբարք դիաց համբարեալ էին ի նմա (Բուզ. 828):

ԵՐՐՈՐԻ: Այս ենթախմբում ընդգրկված են հոգնակիակազմ այն հիմքերը, որոնք կառուցվածքային տարբեր դրսևորումներ ունեն: Ամենից առաջ, շարքում զգալի թիվ կազմող բառեր հայերենում գիտակցվում են որպես պարզ կամ արմատական ձևեր, իսկ փոխատու և հիմք լեզվի բառակազմական կանոններով դրանք բաղադրյալ են, ներկայացնում են մասնիկ + արմատ, արմատ + արմատ կառուցաները: Անշուշտ, բառամասերի նշման տարբերակումը բացարձակ չէ, քանի որ հանդիպում են նաև դեպքեր, երբ որևէ բառի բաղադրիչներից մեկը անկախաբար գիտակցելի է հայերենում, իսկ մյուս բաղադրիչի ինքնուրույն գործածությունը բացառվում է: Ենթախումբը լրացվում է նաև բաղադրյալ այնպիսի բառերով, որոնց բաղադրիչները վերջնական ստուգաբանությամբ չեն հաստատվել, և հայագիտության մեջ դրանց վերաբերյալ կան անորոշ, երբեմն էլ հակասական կարծիքներ: Նման դիտարկումները հիմք են տալիս՝ ենթախմբի բառերի համար ընդունել հետևյալ շարքերը.

ՓՈՒՍԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ

Այս շարքի բառերը հիմնականում պարսկական (պահլավական, իրանական) փոխառություններ են. միայն առանձին բառերի բաղադրիչները տարբերակելու համար հիմք է ընդունվում զենդերենը: Պետք է նշել, որ հայագիտության մեջ այս բառերի բաղադրիչների վերջնական ստուգաբանությունը հաստատվում է փոխատու լեզվի միջոցով, չնայած հանդիպում են նաև տարբեր մեկնություններ: Այդ պատճառով էլ մեր քննարկման ընթացքում առավել հավաստիները բերում ենք բառամասերի նշումով միայն, իսկ մյուսների վերաբերյալ կատարում ինչ-ինչ դիտողություններ ևս:

Ենթախմբում այս բառերը համեմատաբար մեծ թիվ են կազմում, սակայն մյուս շարքերի նման արանց հոգնակին հանդես է գալիս նվազ հաճախականությամբ, այսպես՝ եթե հաճախակի են հանդիպում հրեշտակ, սեպուր, հրամամ, օրեն բառերի հոգնակի ուղղականի ձևերը, ապա մյուսների համար ունենք ընդամենը մեկ-երկու օրինակներ միայն, ինչպես՝

Անապակ: Թվում է՝ հոգնակիակազմ այս հիմքը հարմար է մեկնաբանել հայերենի բառակազմական միջոցներով, այսինքն՝ կազմված է -ան նախածանցով և ապականել բայով, սակայն բառահիմքի ճիշտ ստուգաբանությունը տրվում է արմատական և հայկազյան բառարաններում՝ թխեցնելով պարսկերենի ոձ «անխառն, մաքուր» բառից: Բառի հոգնակիի համար ունենք՝ զի և մաքսաուրք, և պոռնիկք, և մարդասպան անապակք... լիցին նմա անտարանիչք զփրկութիւնս առնելոյ (Ազ. 876):

Անապատ: Հոգնակիակազմ այս հիմքի թե՛ առաջին բաղադրիչը (ոձ ժխտական մասնիկ) և թե՛ արմատական մասը (ծծձ «չեն, քնակված») մեկնաբանվում է պարսկերենի միջոցով: Բառի հոգնակին հանդիպել է մեկ անգամ՝ որոց դադարք՝ անապատք, և ամալիք, և ծածկոյթք՝ վեմք և մացառք (Խոր. 396):

Բազուկ: Թեև հոգնակիակազմ այս հիմքը կապվում է պահլավերենի համապատասխան ձևի հետ, այնուամենայնիվ, Հր. Աճառյանը հնարավոր է համարում նաև նրա հընդեվրոպական ծագումը՝ բաղադրված -ուկ վերջնամասնիկով⁷: Բառի հոգնակիի համար ունենք՝ որոց առ հասարակ ոտք ի զնդին էին, բազուկք իւրաքանչիւր՝ յետս դարձեալ ի վերայ իւրաքանչիւր թիկանց (Բուզ. 16):

Գառազան: Հոգնակիակազմ այս հիմքը բարդություն է, որի առաջին բաղադրիչը հընդեվրոպական ծագում ունի, բայց հայերենին է անցել այլ հնչյունակազմով (gʷav > կով): Հնչյունակազմի նման արտահայտությունը և երկրորդ մասի իմաստը հաստատում են, որ ամբողջական բաղադրությունը հայերենին է անցել պարսկերենից՝ gāv «եզ, կով, արջառ» և az «վարել, քել» արմատներով:

⁶ Նույն տեղում, էջ 148:

⁷ Նույն տեղում, էջ 876:

Հայկազյան բառարանում չվկայված և մեր կողմից առանձնացված հոգնակիի օրինակն է՝ և ոչ գաւազանք բաւական էին արժանի առնել յազելոյ զանարժանն (Եզն. 95):

Գուշակ: Թեև հոգնակիակազմ այս հիմքը մասնիկավոր է, սակայն նրա արմատական մասի ինքնուրույնությունը հնարավոր չէ ընդունել հայերենում՝ անկախ գործածությունը չունենալու պատճառով: Բառի քաղաքիչների առանձնացումը կատարվում է փոխատու լեզվի օգնությամբ, այսինքն՝ կազմված է *ցւ՛ժ* «զել, ունկնդրել» արմատական մասից և *-ակ* վերջածանցով, որի հոգնակիի համար ունենք՝ քանզի նմանությունը երևեալք առ ժամայն արդարոցն՝ **գուշակք** ճշմարտութեանն հախտենականին որ գալոցն էր՝ լինէին (Ազ. 190):

Պարման: Հոգնակիակազմ այս հիմքը մասնիկավոր է (դար + ման): Թվում է՝ առաջին բաղադրիչի ծագումը կարելի է քացատրել հնդեվրոպական *dher* «կանգնել, մնալ» արմատով, սակայն Հր. Աճառյանը հաստատում է ամբողջական բառի փոխատու լինելը՝ վկայակոչելով նաև Հ. Հյուբշմանի հետևյալ կարծիքը. «... -ման մասնիկը և բառի նոր նշանակությունը, որ միայն իրաներենին է հատուկ, ցույց են տալիս, որ բառը փոխառյալ է»⁸:

Ինչ վերաբերում է բառի ձևախմբատային դրսևորումներին հայերենի բարբառներում, ապա այստեղ գործում են երկու տարբեր փոխանցումներ: Այսպես՝ «կեր, խոտ, ծղոտ» իմաստով գործածելիս այն ընդունում է բնիկ բառին համապատասխանող հնչյունակազմը (բառակզրի ձայնեղ բաղաձայնի շնչեղացում և խլացում), որով հաստատվում է նրա գոյությունը վաղ ժամանակներից: Իսկ «դեղ, խնամք» իմաստով գործածության համար պետք է ենթադրել, որ բառը բարբառներին է անցել նոր պարսկերենից և արտահայտում է փոխատու լեզվի հնչյունակազմը, այսինքն՝ բառասկզբի ձայնեղ բաղաձայնը առանց փոփոխության պահպանվում է հնչյունական տարբեր օրինակափոխություններ ունեցող բարբառներում (Մուշ, Համշեն, Թիֆլիս, Վան, Ղարաբաղ ևն): Բառի հոգնակիի համար առանձնացված օրինակն է՝ և դարմանք, և ծախք յարքունուտ ելցին (Խոր. 416):

Երիտասարդ, հարազատ, ճանապարհ, սեպուր: Հոգնակիակազմ այս հիմքերը բարդ բառեր են, որոնց բաղադրիչները քացատրվում են միայն փոխատու լեզվի միջոցով: Այսպես՝ երիտասարդ բառը բաղադրված է *rētog* «երիտասարդ, պատանի» և *sard* «տարի» հարազատ բառը՝ *hadā* «միասին» և *zāta* «ծնված», ճանապարհ բառը՝ *čarana* «զանալ, շարժել» և *pard* «անցք», սեպուր բառը՝ **vīsyā + pudia* բաղադրիչով:

Հայկազյան բառարանը վկայություն չի տալիս երիտասարդ, ճանապարհ բառերի համար. մեր կողմից առանձնացված հոգնակիի օրինակներն են.

Երիտասարդ՝ և մարգարեացից որդիք ձեր և դստերք ձեր, և երիտասարդք ձեր տեպիս տեսցեն (Ազ. 372):

Ճանապարհ՝ և հատեալ ճանապարհք ոսմկաց, և ամենայն բարությունն վրդովեալ ապականեր (Խոր. 412, նաև՝ Բուզ. 300):

Մյուս երկու բառերի հոգնակի ուղղականի համար առանձնացված են հետևյալ օրինակները.

Հարազատ՝ Հանզի ինձ այտքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք և հաւաստի հարազատք (Խոր. 80):

Սեպուր՝ Եւ տաղտկացեալ մեծամեծ տանուտեարք Հայոց և աւագ սեպուրք, և ամենայն ժողովրդոցն բազմութիւնք (Փռպ. 60, նաև՝ 106, 118, 122, 142, 156, 172):

Հրաման, հրեշտակ, նուէր, պատկեր, պատրաստ, պարիսպ, վտանգ: Հոգնակիակազմ այս հիմքերը բաղադրյալ են, որոնց բաղադրիչները քացատրվում են միայն փոխատու լեզվի միջոցով, այսինքն՝ համադրված են *fra-*, *ni-*, *pati-*, *pari-*, *v*: Գախաձայնակներով և *mā*, *aēs* «շտապել, ուղարկել», *vaēd* «իմանալ, ճանաչել», *kar* «անել, կատարել», *rāsta* «պատրաստ», *spā* «նետել, զցել», *taēc* «սեղմել, ճնշել» արմատական ձևերով:

Հայկազյան բառարանը վկայություն չունի հրեշտակ, նուէր, պարիսպ բառերի կիրառության համար: Մեր կողմից առանձնացված օրինակներում հրեշտակ բառի հոգնակին ունի կիրառական մեծ հաճախականություն. համեմատաբար զգալի են նաև հրաման բառի հոգնակիի ձևերը, իսկ մյուս բառերի հոգնակիի համար ունենք մասնակի օրինակներ միայն, ինչպես՝

Հրեշտակ՝ Եւ հրեշտակք այն են, որ սպասաւորք են նորա մեծութեան (Ազ. 44, նաև՝ Ազ. 144, 180, 196, 258, Փռպ. 262, Եզն. 68, 76, 104, Եղ. 10, 70):

Հրաման՝ Հանզի իբրև եկին հասին հրամանք հրովարտականն ի մեծ թագաւորէն Յունաց առ Տրդատ արքայն Հայոց Մեծաց (Ազ. 96, նաև՝ Ազ. 234, 286, Եզն. 106, 111, 118):

⁸ Նույն տեղում, էջ 640:

Նուէր՝ Եւ իբրև եկն եհաս ի սահմանս Հայոց... բազում անուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ (Ագ. 452):

Պատկեր՝ որ ի վերայ բազմին և սեանց կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ (Խոր. 178, անս՝ Ագ. 48):

Պատրաստ՝ և ընդ ծագել առաւօտուն պատրաստքն զհնուք անկանցին ի վերայ այնց (Փրայ. 174, անս՝ 353, 360):

Պարիսպ՝ որ և երկու մեծամեծ բերդացն... պարիսպքն առանց ուրուք մերձեցալոյ անկեալ կործանեցան (Եղ. 140 անս՝ 220):

Վտանգ՝ զի՞նչ էր բանս առ Աստուծոյ յաղագս ի ձեցջ վտանգիցս, որոց վտանգք և աղբատութիւն սեպհական է (Խոր. 302):

Վիշապ: Հայագիտության մեջ հոգնակիակազմ այս հիմքի ծագումը կապում են պահլավերենի *vēsāp բառի հետ: Պետք է նշել, սակայն, որ հայերենի բարբառներում առկա են հնչյունական այլ տարբերակներով ձևեր (յուշաք, յուշապ, հօշափ, հուշափ, հոշափ, օշափ, օշէփ ևն), որոնց համար հնարավոր չէ նախահիմք ընդունել վիշապ ձևը: Հակահասակ դեպքում բարբառներում կառուցման ոչ օրինակաբար հնչյունափոխական մի շարք երևույթներ (բառասկզբի վ-ի անկում, ի>ու, ի>օ փոփոխություն, չ, ֆ հնչյունների հավելում), որոնք չեն կարող բացատրվել ոչ պատմական գործոնով և ոչ էլ հնչյունների փոխադրեցությամբ: Բնական է, որ մասն սկզբունքով առաջնորդվող հեղինակները (Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Վ. Պետոյան, Հր. Աճառյան) ստիպված են հիշյալ հնչյունափոխական երևույթները դիտել որպես բացառություն կամ մասնակի արտահայտություններ: Այդ պատճառով էլ Կ. Դավթյանը, Հ. Մուրադյանը, Ա. Պողոսյանը բարբառագիտական ուսումնասիրություններում՝ վիշապ բառի բարբառային տարբերակների համար այլ նախահիմք են ընդունում, որոնք հիմնականում հանգում են հետևյալ եզրակացությանը. «Օշափ բառի մեջ վ-ի անկում տեղի չի ունեցել, քանի որ բարբառիս օշափ ձևը, ինչպես նշել ենք, գալիս է ոչ թե վիշապ ձևից, այլ գրաբարից ավանդված յուշապ տարբերակից, մեծավաճող որ Ագուլիսի, Մեղրու բարբառներում էլ ունենք՝ յուշափ, յօշափ»⁹:

Այդ դիտողությունը, իրոք, ընդունելի է հայերենի շատ բարբառների համար, քանի որ յուշապ կամ ուշապ հիմքով միայն հնարավոր է մեկնաբանել նախաձայն չ, ֆ հնչյունների առկայությունը, առավել ևս շեշտակիր ու ձայնավորի օ փոփոխությունը Ղարաբաղի, Մեղրու, Ագուլիսի ևն բարբառներում: Ասվածից բխում է այն ենթադրությունը, որ հիշյալ բառը հայերենի բարբառներին է անցել երկու կառուցաձևերով. առաջինը՝ վիշապ, որ համապատասխանում է պահլավերենի *vēsāp ձևին, իսկ երկրորդը հավանաբար առաջացել է իրանական սժ «միտք, խելք, քանականություն» և āpa «ջուր» արմատների կցումով, որ հայերենում դարձել է ուշապ կամ յուշապ: Վերջինս հայերենի խոսակցականում պետք է ունենար «ջրին ունկնդրող, նայող, ջրորը հսկող» իմաստները, որ համապատասխանում է ժողովրդական պատկերացումներին և իրանական սժ բառի նախնական իմաստին: Ավելացնենք նաև, որ բառիմաստի փոփոխության վերաբերյալ դիտողություն ունի Հր. Աճառյանը. «Իրանյան բառի նախնական նշանակությունն է սկանջ» ըստ այսմ ուշ դնել բուն. նշ. «սկանջ դնել» և հյ. ուշ միանում է ռուս. ушъ «գլխանջներ» ձևի հետ»¹⁰:

Վիշապ բառի հոգնակիի համար առանձնացված է՝ Այլ և վիշապք, ասեն, և նհանգք կեղծիս ի կեղծիս լինին (Եզն. 72, անս՝ 44—45):

Մողես, օտար, օրէն: Թեև հոգնակիակազմ այս հիմքերը պարսկական փոխառություններ են՝ համապատասխանաբար ներկայացնելով mālēs/āmālēs, *awtar, awdēn ձևերը, սակայն դրանց բաղադրյալ կառուցաձևի համար նախահիմք են ընդունվում գեոդերենը կամ գեոդերենի և պարսկերենի արմատների զուգորդումը, որի միջոցով միայն հնարավոր է բառամասերի առանձնացումը: Այսպես՝ մողես բառը կազմված է maīrya «մահացուցիչ» և mārō «օձ» օտար բառը՝ aīwi և tara, օրէն բառը՝ awi: և dāy «դիտել, տեսնել» բաղադրիչներով:

Հայկազյան քառարանը վկայություն չի բերում օտար բառի կիրառության համար, իսկ մեր կողմից առանձնացված հոգնակիի օրինակն է՝ Առ այսքիւք և հաշմք անդամովք ոչ խնամեալ լինէին, և հիրք անձանօք ոչ ընդունէին, և օտարք ոչ ժողովէին (Խոր. 336):

Մյուս բառերի հոգնակիի համար ունենք՝
Մողես՝ Օձք և մողեսք, գորտք և մրջմունք, որ այլ ևս խառնվեցող բազմաճիք են, սի՛ կայցն (Եղ. 106):

⁹ Կ. Դավթյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 69, Հ. Մուրադյան, Կարավաբերդի բարբառը, Երևան, 1967, էջ 89:
¹⁰ Ա. Պողոսյան, Հաղորդի բարբառը, Երևան, 1965, էջ 52:
¹¹ Հր. Աճառյան, նշվ. աշխ., Երևան, 1973, հ. 3, էջ 606:

Օրէն՝ ապա թէ ոչ՝ դու գիտես, և քո օրէնքն, որում ստեան (Բուգ. 200, նաև՝ Բուգ. 816, Ագ. 194, Փրպ. 278):

ՀՍՏՈՒԳԱԲԱՆՎԱԾ ԲԱՌԵՐ

Այս շարքում ընդգրկվում են փոքրաթիվ այնպիսի բառեր, որոնց ծագումն ու կառուցվածքը վերջնական ստուգաբանությամբ չեն հաստատվել: Չնայած դրան՝ հայագիտության մեջ եղած կարծիքների համաձայն այդ բառերը առանձնացվում են որպես բաղադրյալ՝ հիմնականում մասնիկ + արմատ, իսկ մասամբ՝ արմատ + արմատ կառուցաներով: Այսպես՝ հայագետներից ոմանք (Գ. Ավետիքյան, Ս. Բուզգե, Յ. Կարստ, Ս. Տերվիշյան ևն) ընդունում են, որ **հանգոյց**, **հանդերձ**, **նուազ**, **չիրիմ**, **պատճառ**, **պիղծ**, **ուրոյն** բառերը մասնիկավոր են և համարվում են **համ + ազոյց**, **համ + դարձ**, **նի + վազ**, **չիր//չեր + իմ**, **պատ + ճառ**, **պիծ + յ/պիղ + ծ**, **ուր//իր + ոյն** բաղադրիչներով, իսկ **Հր.** Աճառյանի կարծիքով **վտիտ** և **փափուկ** բառերը բարդ են՝ կազմված **վիտ** և **փակ** արմատների կրկնությամբ¹²:

Չնայած այդ բառերի մանրամասն քննությունը տրված է արմատական բառարանում, սակայն հարկ ենք համարում մեկ-երկու բառերի վերաբերյալ կատարել մասնակի դիտողություններ՝ հիմք ընդունելով հայերենի բարբառներում առկա լրացուցիչ փաստարկումները և բառաձևերը: Այսպես՝

Հանգոյց: Արմատական բառարանում Հր. Աճառյանը բառի դիմաց բավարարվում է մեկ-երկու թոռուցիկ կարծիք Զելով միայն: Հայկազյան բառարանը այն համարում է բաղադրյալ՝ կազմված **համ-** նախամասնիկով և **ազոյց** «հագցնել» արմատական ձևով: Այս դիտողությունը հեռու չէ բառի արտահայտած իմաստից, մանավանդ որ հիշյալ նախամասնիկը կիրառվում է նաև **հան-** ձևով¹³:

Բառի ստուգաբանությանը կարող է նպաստել **հանգ** «ձև, կերպ» արմատի առկայությունը հայերենի մի քանի բարբառներում: Առավել հետաքրքիր է Ուրմիայի բարբառում **խանգայն** ձևի «հանգոյց» իմաստով գործածությունը¹⁴: Բանն այն է, որ հայերենի բարբառներում բառի բնիկ կամ փոխառյալ լինելը հնարավոր է որոշել հնչյունակազմի տարբեր դրսևորումներով: Այսպես՝ փոխառյալ բառերում պահպանվում է փոխատու լեզվի հնչյունակազմը նույնությամբ, իսկ բնիկ բառերի մեջ տեղի են ունենում զանազան փոփոխություններ՝ ըստ տվյալ բարբառում գործող օրենքների: Այստեղից կարելի է եզրակացնել, որ **հանգ** բառը հայերենում գոյություն է ունեցել վաղ ժամանակներից, որը Մեդրու, Ղարաբաղի, Գորիսի բարբառներում մնացել է անփոփոխ, իսկ Ուրմիայում արտահայտվել է **խանգ** ձևով՝ համապատասխանելով բարբառի հատկանշական **h > ʃ** փոփոխությանը: Հավանաբար բառը «ժամանակ, ձև, կերպ, բնավորություն» իմաստներին զուգահեռ գործածվում էր նաև «կապ, հանգոյց» նշանակությամբ, որով հիմք է դարձել **խանգայն** բաղադրության համար:

Փափուկ: Չնայած Հր. Աճառյանը հոգնակիակազմ այս հիմքը առանձնացնում է որպես կրկնավոր բարդություն, սակայն բարբառներում առկա փաղաքշական **փափուիկ**, **փամփուիկ**, **փափուկ** և **փափուն** «մանկական փափուկ կոշիկ» ձևերը հնարվորություն են տալիս ենթադրելու, որ բառը մասնիկավոր է՝ կազմված **փափ//փամփ** արմատով և **-ուկ//իկ//ուն** վերջնամասնիկներով: Այս դեպքում կարելի է համաձայնել Ս. Տերվիշյանի կարծիքին և բառարմատը կապել հնի. phamph «ուռչել» ձևի հետ, մանավանդ որ բարբառային տարբերակները «նուրբ, գիրգ, քնքուշ» իմաստներից բացի ունեն նաև «գեր, փարթամ» նշանակությունը:

Ինչ վերաբերում է փաստական նյութին, ապա պետք է Զել, որ հայկազյան բառարանը վկայություն չի տալիս **հանգոյց**, **հանդերձ**, **պիղծ**, **վտիտ** բառերի համար, իսկ մեր կողմից առանձնացված են հոգնակիի հետևյալ օրինակները՝

Հանգոյց՝ ի վերայ գազաթանն ի թիկանց արծույն՝ **հանգոյցք** թագի կապեալ աշխարհաւանդ հանգոյց (Բուգ. 374):

Հանդերձ՝ սոյնպես և արտաքոյ կազմէից ի ներքոյ կուտ վառեալք, և ի վերայ հանդերձք զգեցեալք պատրաստէից (Բուգ. 354):

Պիղծ՝ անօրէնք էք և պիղծք, ես ոչ կարեմ ձեզ հովի կալ (Բուգ. 110, նաև՝ Բուգ. 274, Եզն. 196):

Վտիտ՝ որոց չորեցունց պտուղք **վտիտք** էից և թառամք, և բերքն պակասք և աճնըմանք (Փրպ. 74, նաև՝ Փրպ. 68):

¹² Տե՛ս նույն տեղը, հ. 3—4:

¹³ Տե՛ս նույն տեղը, հ. 2, էջ 18:

¹⁴ Տե՛ս Մ. Ասատրյան, Ուրմիայի (Սոյի) բարբառը, Երևան, 1962, էջ 218:

Մյուս բառերի հոգնակիի օրինակներն են՝

Նուազ՝ այլ **ճուազք** առաել թուով և վտիտք ատոքութեամբ, որպէս թէ ծնկեայք էին (Փրպ. 68, նակ՝ Փրպ՝ 368):

Ծիրիմ՝ Իսկ նոցա պատրաստեցան տեղիք բնակութեան, և արծանի եղեայք շիրիմք հանգստեան (Բուգ. 14):

Պատճառ՝ Բայց թէպէտ և յանծից մտին ցար յաշխարհ, սակայն են և այլ ինչ պատճառք (Եզն. 58, նակ՝ Եզն. 21, 61, 96, 105, 108, 109, 112, 114, 155, 164, Խոր. 38, 132, Ագ. 274, Փրպ. 282, Եղ. 300, 302):

Ուրոյն՝ Նոյնպէս և թուզն գտեալի իրոյ տերևոյն և զարար կեղևոյն, և զտարր մրգոյն ի նմանէ որոշ, և այլքն ի նմանէ ուրոյնք (Ագ. 358):

Փափուկ՝ Կանայք **փափուկք**, դատերք նախարարացն... նմանեալ վերնոյն անքունք եղեն (Փրպ. 358):

ԲՆԻԿ ԲԱՌԵՐ

Այս շարքում առանձնացվում են հնդեվրոպական ծագման փոքրաթիվ բառեր, որոնց բաղադրիչների անկախությունը թեև գիտակցվում են հիմք լեզվում, սակայն հայերենի մեջ ամենից առաջ դրանք ընկալվում են որպես անտարրալուծելի կամ պարզ բառեր: Այսպես՝

Հոփի: Չնայած հայագետներից ոմանք (Հ. Հյուրջման, Հ. Պեղերսեն) փորձում են բառի կառուցվածքը մեկնաբանել հոփ + իւ բաղադրիչներով, սակայն վերջնական ստուգաբանությամբ հաստատվում է, որ այն բաղադրված է հնդ. *su* «ոչխար» և *pa* «արածել, արածացնել» արմատներով, որի երկրորդ բաղադրիչը ա անականով պահպանվում է նաև հօտ բառի մեջ¹⁵:

Նեարդ, սաստ: Հոգնակիական այս հիմքերը բաղդրյալ են համարվում՝ հաշվի առնելով նախալեզվյան նրանց կառուցածները, այսինքն՝ առաջինը բխում է *snē-* «հյուսել, մանել» արմատի *snēurt*, իսկ երկրորդը՝ *k'ās//k'es* «առաջնորդել, ուսուցանել, կրթել» արմատի *k'tsə*: ածանցական ձևերից:

Օդ: Թվում է՝ հայերենի համար ավելի անտարրալուծելի պետք է համարել հոգնակիական այս հիմքը, սակայն հայագետների կողմից հաստատվում է (Ղ. Պատրոսյանի, Հ. Պետերսոն, Հր. Աճառյան), որ բառը բաղադրյալ է և ծագում է հնդ. *audho-* ձևից՝ կազմված *au* «փչել, շնչել», արմատով և *-dh* անականով:

Հայերենի բարբառներում բառը գործածվում է անփոփոխ և *h*, *y* նախահավելականներով՝ առանձին կամ բառակապակցություններում արտահայտելով զանազան իմաստներ՝ *օդ'առնի/լ'օդ կպնի* «հարբուխ ստանալ», *հօքք* «բերանի արտաշնչությունը», *տաքօդք* «չերմ հիվանդությունը»¹⁶:

Ղարաբաղի բարբառում *հօք* նշանակում է նաև «անկուշտ, ազահ, անհագուրդ»՝ մանավանդ ջուր օգտագործելիս:

Այս բառերի հոգնակի ձևերը աչքի չեն ընկնում կիրառական հաճախականությամբ, ինչպես՝

Հոփի՝ և լիշիք դուք իբրև գլաաշինք, զի ոչ գուցե նոցա հոփիք (Բուգ. 66, նակ՝ Բուգ. 20, 142):

Նեարդ՝ Զի միանգամայն կազմիցին զոսկերօքն չորացելովք՝ միսքն և՛ ջիղքն, և՛ աճառքն, և՛ նեարդքն մորթովքն զգեցեայք և մագովքն զարդարեայք (Ագ. 362):

Սաստ՝ եթե բնութեամբ իցեն, ընդէ՛ր օրէնք ի թագաւորաց դնիցին, և սաստք ի յիշխանացն, և պատիծք ի դատաւորաց (Եզն. 42):

Օդ՝ Քանզի ի ժամանակին յայնմիկ Արեւ ուղեկցեալ արեգական, և օդք ջերմանայինք պղտորեալ ժանգահոտութեամբ փչէին (Խոր. 316, նակ՝ Խոր. 452, Ագ. 150, 194):

Վերոհիշյալ դիտարկումները ցույց են տալիս, որ բառի ձևաիմաստային դրսևորումները բացահայտելու համար բավարար չէ համաժամանակյա մոտեցումը, այլ, ամենից առաջ, անհրաժեշտ է պատմահամայնատական մեթոդի կիրառումը, քանի՜ որ լեզվի զարգացման ընթացքում տեղի են ունենում և՛ բառակազմի, և՛ բառիմաստի տեղաշարժեր: Միաժամանակ պարզ դարձավ, որ բառային փոփոխությունները կարող են ընթանալ բաղադրիչների սերտանման, իմաստի մթագմման կամ վերաիմաստավորման ճանապարհով: Այսպես՝ եթե լեզվի մի կտրվածքում տվյալ բառը ընդունվում է որպես բաղադրյալ, ապա նույն լեզվի զարգացման հաջորդ փուլում այն կարող է գիտակցվել պարզ կամ արմա-

¹⁵ Տե՛ս Հր. Աճառյան, *Աշվ. աշխ.*, հ. 3, էջ 117:

¹⁶ Նույն տեղում, հ. 4, էջ 609, 1978:

տական: Բնական է, որ այս դեպքում տեղի է ունենում նաև բառիմաստի շրջում, առավել ևս՝ նեղացում: Եթե մասնիկավոր կազմությանը բառերում իմաստափոխությունը կարող է զգալի չլինել, ապա բարդություններում այն պարզորոշ է, քանի որ երկու և ավելի արմատների տարբեր իմաստները միավորվում են, ստանում մեկ ընդհանուր նշանակություն: Այս երևույթը հատուկ է ինչպես քնիկ, այնպես էլ փոխառյալ բառերին:

Б. Х. МЕЖУНЦ — Несколько формо-смысловых проявлений множ. ч. простых консонантных слов и образующих множ. ч. основ.— Анализ простых консонантных слов проводится на основе сравнения литературных вариантов габара и ашхарабара. В этом аспекте слова группируются по следующим признакам: слова со смысловыми или функциональными сходствами; слова общеупотребительные в древнеармянском, но ставшие историческими архаизмами или устаревшие для литературного ашхарабара; слова употребляемые в древнеармянском в коренной форме, а в ашхарабаре—только в осложненных формах.

Для второй части исследования критерием сравнения принимаются, с одной стороны, санскрит и промежуточные языки, с другой—древнеармянский. Здесь выясняется, что ряд просто воспринимаемых в армянском слов в персидском или праязыке являются или сложными, или выступают в составе сложных или аффиксированных слов.

В статье рассматривается также небольшое число неэтимологизированных слов, которые считаются составными по мнению некоторых арменистов.